

ԽՈՀԱ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ԵՎՐՈՊԱ Հ 1961

# Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հ 24166

ԿՈԼՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1938 ԹՎԻ  
ԻՆՎԵՆՏԱՐԻԶԱՑԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԵՍԻՆ

1865

ՀՈՂ. ՔՈՂ. ԿՈՄԱՏ



1938 թ.

ՅԵՐԵՎԱՆ

Թուլաստրված և Գլուխանի լիազոր կիրովականի տպաբան Պատվիր № 220\*

## Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՐԵԿԵՆ ԽՆՎԵՆՏԵՐԻ ԶԵՅԻՑՆ  
ԱՆՑԿԵՑՆԵԼՈՒ ՄԵՍԻՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՅՈՒՆԸ

Ինվենտարիզացիան, այսինքն առկա յեղած գույքանյութային արժեքների, դրամական միջոցների լրիվ ստուգումը, հաշվարկների ճշտումը, ինչպես նաև կոլտնտեսություններում հայտնաբերված գույքանյութային արժեքների մասցորդների տվյալների հիման վրա հաշվառման գրության ստուգումը, յուրաքանչյուր կոլտնտեսություններում անպայման անհրաժեշտ և անցկացնել նախքան տարեկան հաշվետվություն կազմելը:

Կոլտնտեսությունում լրիվ ինվենտարիզացիա անցկացնելը, խոշոր անտեսական և քաղաքական նշանակություն ունի, ինչինտարիզացիան պետք ե ցույց տա թե վորքան լրիվ և ճիշտ ևն կերպավում կոլտնտեսությունների և կոլտնտեսականների կողմից ԽՍՀՄ Սահմանադրության 7-րդ հոդվածի ցուցմունքները, գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության 18-րդ հոդվածի պահանջը և ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմիորենի 1932 թ. ոգոստոսի 7-ի վորոշումը Սոցիալիստական սեփականությունը պաշտպանելու վերաբերյալ:

Ինվենտարիզացիան պետք ե ի հայտ բերի և վերացնի կոլխոզային գույքի պահպանման և ոգտագործման թերությունները՝ դիմադրվության, անփույթ և անտնտեսավար վերաբերմունք դեպի գույքը, գորության, ֆասարարության և այլ ֆաստեր, գործնք խափառում են կոլխոզային բարերի պահպանմանը:

Ինվենտարիզացիան միաժամանակ պետք ե ծառայի ըստուգման միջոց, թե վորքանով տվյալ կոլտնտեսությունը պայքարել և կարգավորելու իր ֆինանսներն ու հաշվառումը, լրիվ լիկվիդացիայի յենթարկելու պարագերը, կոլտնտեսության ֆինանսական գրության և տնտեսական հզորության ամրացմանը: Այդ պատճառով ինվենտարիզացիան չպետք ե դիտվի վորպես կոլտնտեսության գույքի հասարակ տեխնիկական ստուգում և կատարվի միայն կոլտնտեսության վարչության և հաշվետարի (հաշվապահ) կողմից, ինվենտարիզացիայի զործին պետք ե ներդրուավեն բոլոր կոլտնտեսականները:

## ԻՆՎԵՆՏԱՐԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե՝

1. Հայտնաբերել կոլտնտեսության գույքի, մթերքների և նյութերի ինչպիս նաև դրամական այլ միջոցների առկա քանակը (գույք բերելով մնացորդները):

2. Ստուգել բանկերին, ՄՏԿ-ներին և այլ կազմակերպություններին ու անձերին կոլտնտեսության ունեցած պարտքերի մնացորդները, մթերող զանազան կազմակերպություններից և անձերից կոլտնտեսության պահանջների մնացորդները, նույնպիս և ստուգել կոլտնտեսության վարչության կողմից ինչպիսի միջոցներ են ձեռք առնված պարտքերը լուծարքի յենթարկելու համար:

3. Ստուգել աշխորերի գրանցումները և կոլտնտեսության անդամների հետ ունեցած հաշվարկները, ինչպիս տարվա ընթացքում ի հաշվի աշխորերի, նրանց փաստացի տրված ավանդները, նույնպիս և հասանելիք յեկամուտը:

4. Համեմատել հաշվապահական դրքերում յեղած գույքերի, նյութերի և ուրիշ արժեքների մնացորդները, փաստացի առկայի հեղածի հետ, պարզել և գրանցել ամելցուկներն ու պակասորգներն այն հաշվով, վորագեղի տարեկան հաշվետվություն ըստ հաշիվների դուրս բերված մնացորդները ճշտությամբ և լրիվ համապատասխանեն ինվենտարային ցուցակի տվյալներին:

Կոլտնտեսություններում ինվենտարիզացիան անցկացվում է գեկտեմբեր ամսվա ընթացքում: Ինվենտարիզացիա անցկացնելու նախապատրաստումը պետք է ավարտել ընթացիկ տարվա գեկտեմբերի 1-ին:

Ինվենտարիզացիայի յենթակա յեն ընթացիկ տարվա 1 գեկտեմբերի դրության՝

1. Կոլտնտեսության ամբողջ հիմնական արտադրական միջոցները և գույքը (բացի անասուններից):

2. Մթերքներ և նյութեր:

3. Հաշվարկներ կազմակերպությունների և անձերի հետ, նույնպիս և կոլտնտեսության անդամների հետ այլ հաշվարկներով (գերբարներ և կրեդիտորները):

4. Աշխորերի գրանցումները և հաշվարկներ, կոլտնտեսականների հետ աշխորերի հաշվին նրանց տրված գրամական և մթերքային ավանսները:

Առ 1-ը գեկտեմբերի ինվենտարիզացիայի տվյալները տարբին վերջանալուց հետո, բերվում են առաջիկա տարվա 1-ին հունվարի դրության, մտցնելով ուղղություններ համաձայն գրքային գրանցումների առաջացած գեկտեմբեր ամսվա ընթացքում:

Ինվենտարիզացիայի յենթակա յեն առ 1/1 առաջիկա տարվա գրության՝

1. Անասուններ (մեծահասակ և մատղաշ).

2. Կոլտնտեսության դրամական միջոցները դրամարկղում, քննթացիկ հաշվիմերում և կապիտալ ներդրումների հաշվում:
3. Արժեքափոր թղթեր:
4. Հաշվառքներ կոլտնտեսության անդամների հետ ըստ դրամական և նատուրալ յեկամուտների բաշխման:
5. Անավարտ շինարարության, կապիտալ վերանորոգման և արտադրության ծախսերը:

Դույքքանյութային արժեքների և դրամական միջոցների ինվենտարիզացիա անցկացնելու համար, կոլտնտեսության վարչությունը առանձնացնում և ինվենտարիզացիա անցկացնող հանձնաժողով կազմով՝ կոլտնտեսության նախագահի, հաշվետարի (հաշվապահի) և կոլտնտեսության անդամներից 2—3 լավագույն հարվածայինների:

Ինվենտարիզացիան ճիշտ և ժամանակին կատարելուն՝ անձնական պատասխանատվությունը կրում են կոլտնտեսության նախագահը և հաշվետարը (հաշվապահը) բացի գա՝ հաշվետարը պատասխանատու յէ ինվենտարիզացիա անցկացնելու ուժինիկային և ձեվակերպմանը:

Կոլտնտեսության վերստուգիչ հանձնաժողովը լրիվ կազմով մասնակցում և ինվենտարիզացիան անցկացնելու աշխատանքներին՝ հայտնաբերում և գույքամթերային արժեքների և դրամական միջոցներից գուրս բերված մնացորդների ճշտությունը սահմանում է ավելցուկների և պակասորդների առկայությունը և նախքան տարեկան հաշվետվություն կազմելը, այդ մատերիալը ոգտագործում և կոլտնտեսության ամբողջ տնտեսական, ֆինանսական գործունեյությունը, դոկումենտալ ստուգման ժամանակ:

Դրա համար վերստուգիչ հանձնաժողովի անդամները միմիանց մէջ բաժանելով՝ տնտեսության առանձին մասերում գուրս բերված մնացորդների ստուգման աշխատանքները, մասնակցում են ինվենտարիզացիոն հանձնաժողովի գույքանյութային արժեքների և դրամական միջոցների մնացորդների գուրս բերման աշխատանքների մէջ:

Կոլտնտեսականների հաշվարկների ստուգումը կատարվում է անմիջականորեն կոլտնտեսության վերստուգիչ հանձնաժողովի միջոցով վորպես կոլտնտեսության տնտեսական ֆինանսական գործունեյության տարեկան վերստուգման հիմնական մասը:

Դույքքանյութային արժեքների և դրամական միջոցների ստուգումը կատարվում է նրանց պահպանության վայրում: Ստուգմանը անպայման մասնակցում են այն անձնավորությունները, վորոնց պատասխանատվության տակ և գտնվում ստուգիլիք պահպանվող արժեքները (բրիգադիրներ, պահեստապետներ, գանձապահներ և այլն):

Ինվենտարային ակտը ստորագրում են հանձնաժողովի անդամները, այն անձինք, զորոնց պատասխանատվության տակ և գտնվում ստորգող արժեքների պահպանումը և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, զորոնք մասնակցել են ինվենտարիզացիային:

Ինվենտարիզացիայով առկա յեղած արժեքները պետք է համեմատել հաշվապահական գրքերի մնացորդների հետ:

Հայտնաբերված բոլոր տարբերությունները առկա յեղածի և մնացորդի միջնորդ ըստ գրքերի պետք և պարզվին և դրանցում ներում յեղած անձտությունները ուղղվեն: Պետք և մանրակրկիտ կերպով հայտնաբերել ավելցուկների և պակասորդների առաջացման պատճառները, պարզել պակասորդի միջ մեղադրվող անձանց և ձեռք առնել միջոցներ գանձելու պակասորդ արժեքները, գույքը ձեռք բերելու հնարավոր գներով (հաշվի առնելով պակասած արժեքի դորակը):

Ինվենտարային ցուցակներում գույքի, նյութերի և մթերքների արժեքը ցույց ե տրվում այն գներով, ինչ գներով նրանք մուտք են յեղել տնտեսության միջ: Գույքի վոչ մի վերագնահատում չզետք և կատարել բացառությամբ մատղաշ անսառնական ների: Մատղաշները բարձր խմբի փոխադրելու ժամանակ, վերագնահատովում են պետական մթերման գներով: Վերագնահատման ժամանակի ի նկատի յե առնվում կենդանի քաշը և կենդանու ցեղական հատկությունները:

## 2. ԻՆՎԵՆՏԱՐԻԶԱՑԻՅԱՅԻ ՆԱԽԱՐԱՏՐԱՍՈՒՄԸ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ինվենտարիզացիոն հանձնաժողովը կազմում ե աշխատանքի որացույցային պլան ինվենտարիզացիան անցկացնելու համար և աշխատանքը բաժանում և հանձնաժողովի անդամների միջեվ: Աշխատանքի պլանը կազմելիս պետք և յելնել նրանից, զորպեսզի առաջին հերթին ստուգվեն տնտեսության այն մասերը, զորոնք ինվենտարիզացիան անցկացնելու ժամանակի ընթացքում կամ քիչ են փոխվում (որինակ՝ շենքեր, մեքենաներ), հետո մթերքներ և նյութերը (որինակ՝ նախ սերմերը և անասնակերը, զորոնք առանձնացված են գարնան համար, հետո ծախսելիք մթերքները, նյութերը և այլն):

2. Ինվենտարիզացիայի ժամանակաշրջանում և անպայմանը ընթացիկ տարվա գեկտ. 1-ին և առաջիկա տարվա հունվարի 1-ին այն կորոնտեսություններում, զորտեղ կրկնակի հաշվապահություն և տարվում, բոլոր զրանցումները և մնացորդները առավելիկ հաշվառման գրքերի միջ պետք և ստորգովին զրքերի վլսավոր հաշիվների զրանցումների և մնացորդների հետ, շրջանառության տեղեկադրերը ոժանդակ հաշիվների հետ ստուգելու

միջոցով: Հասարակ սիստեմի հաշվապահություն ունեցող կոլանտնեսություններում, բոլոր փաստաթղթերը, բոլոր գործարքները, վորոնք կատարվել են մինչև հօւնվարի 1-ը պետք ե դրանցվեն հաշվառման գրքերում:

Պետք ե կարգի բերվին և կարգին բոլոր փաստաթղթերը, վորպեսզի ինվենտարիզացիայի և սուպերման ժամանակ հեշտությամբ գտնվեն անհրաժեշտ տեղեկանքները:

3. Ստուգվում են զանազան հիմնարկների և անձերի կոլանտնեսությանը ունեցած պարտքերի գրությունը: Ստուգումից հետո կոլանտնեսության վարչությունը կոլանտնեսությանն ունեցած պարտքի մասին քաղվածքներ առանձին գրությամբ ուղարկվում և պարտքատերերին պահանջելով անմիջականորեն մարելու պարտքը:

4. Կոլանտնեսության պահանջատերերից վարչությունը պետք է պահանջի քաղվածք, վորպեսզի կոլանտնեսությունը կարողանա ստուգել զանազան կազմակերպություններին և անձերին ունեցած պարտքը:

5. Նախքան ինվենտարիզացիան սկսելը կոլանտնեսության հաշվետարը պատրաստում է ինվենտարիզացիոն հանձնաժողովի համար ինվենտարային ցուցակի համար բանկներ և բոլոր անհրաժեշտ տեղեկանքներ (մթերման գները, շինարարության գնահատման նորմաները, ծավալով կշռի չափը վորոշելու համար ընդունված նորմաները և այլն):

### 3. ԽԵՎԵՆՏՎՐԻԳՅՑԻՐԵՑԻ ՏԵԽՆԻԿԻՆ

#### 1. Գ Ո Ւ Յ Յ Ք

Գույքային ցուցակները պետք ե կազմվեն ըստ առանձին բրիգադի, արդյունաբերական ձեռնարկի, պահեստի և այլն:

Հանձնաժողովը ցուցակներում գրանցում է տնտեսության առկա յեղած փաստացի գույքը (անունը, նշանները, քանակը):

Այն դեպքում, յերբ ստուգվող գույքը հետազում սպառագրելու համար միանգաման անզետաք վիճակում և գտնվում, ինվենտարիզացիայի ցուցակում չի մտցվում: Այդպիսի գույքը գուրս զրելու համար կազմվում է առանձին ակտ: Վորպեսզի հեշտացվի զրելու գրանցումների ու ինվենտարային ցուցակների համեմատությունը և կոլանտնեսության տարեկան հաշվետվության համապատասխան տախտակների լրացումը, անհրաժեշտ ե կազմակերպել գույքային ինվենտարային ցուցակների լրացումը հետեւյալ խմբային նշաններով.

1. Գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ և շարժիչներ (բարզ, պարզ և հասարակ) կալիբրներ, հացահատիկի շարժացաններ սաշակիներով և դիսկրով խոտճանող մեքենաներ, հարթիչներ, խրձկապներ, ձիու գութաններ, սերմազտիչներ, տեսակավորող, լուշչինիկներ, կուլտիվատորներ, ախտահանիչ ապարատներ,

տասնորդական կշեռքներ, սեպարատորներ, սիլոսահատներ, ձիու փոցխներ, ձեռքի սրսկիչներ, ձեռքի փոշոտիչներ, ձիու փոշոտիչներ, ձիու և այլ գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ, լոկոմոբիլներ և շարժական շարժիչներ ձեռնարկներում չսարքավորված (նավթի և այլն):

## 2. Ինվենտարներ և կահավորում:

ա) սժանդակ ձեռնարկների

բ) գաշտավարական բրիգադների

գ) անասնապահական ֆերմաների

դ) կուլտ կենցաղային հիմնարկների

յի) այլ (վարչության, գրասենյակի գույքը և այլն):

3. Փոխադրական միջոցները ա) բեռնատար և մարդատար ավտոմեքենաներ, բ). սայլի տրանսպորտ (ձմռան և ամռան) և այլն:

## 4. Շենքեր, սարքավորումներ և բազմամիա տնկումներ.

ա) շենքեր, սարքավորումներ արտադրական նշանակություն ունեցող (գոմ, ախոռ, հորթանոց, խողանոց, վոչխարանոց, ջերմասրան, մեքենաների մառան, հաշահատիկի պահեստ, բանջարանոցի պահեստ, սիլոսի աշտարակներ, արդյունարկերական և ոժանդակ ձեռնարկների շենքեր և այլն:

բ) բնակելի և կուլտ կենցաղային նպատակների շենքեր (ակումբ, խրճիթ-ընթերցարան, սաղիս անկյուն, գրադարան, մանկամասուր, մանկահերապարակ, ծննդարան, բաղնիք, ճաշարան, խրճիթ-լաբարատորիա և այլն):

գ) բազմամյա տնկումներ:

Գույքը ցուցակագրելու համար (բացի անասուններից) ոգտագործվում է հետևյալ ձևի՝

Ց Ո Ւ Յ Ա Կ

## Գույքի հաւափառման համար

Տնկումների մեջ մասնակի համարը	Անվանում	Գույքի համարը	Փաստացի կառանությունը (քառականը)	Թիացորդ ըստ գրք. առ 1/12-38 թ.	Ավելցուկ	Պակասորդ	Ճանաչումը

Գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ ցուցակագրելու ժամանակ՝ «գույքի հատկանիշը» սունյակում ցույց են տըրպում թե գութանները քանի խոփանի յեն, շարքացանների սաշնիկների կամ դիսկերի քանակը և այլն:

Ավտոմեքենանների և շարժիչների ցուցակագրելու ժամանակ՝ «գույքի հատկանիշը» սունյակում ցույց ե տըրպում նրանց հողորոշյունը ձիու ուժեքով (НР) և նրանց մարկան, շենքեր և սարքավորում ցուցակագրելու ժամանակ ցույց ե տըրպում թե ինչ նյութից և շինված շենքը և նրա տարրողությունը: Շենքերը և սարքավորումները մտցվում են ցուցակների մեջ առանձին-առանձին:

Պազատու տնկումները ցուցակագրելու ժամանակ մացվում են կղունտեսության տնկած տնկումները «գույքի հատկանիշ» սունայիռում ցույց ե տրվում տնկման տարեթիվը, իսկ «քանակ» սունյակում անհրաժեշտ ե ցույց տալ տնկումների տարածությունը հեկտարով և ծառերի քանակը:

## 2. ԱՆԱՍՈՒԻՆԵՐ

Ամբողջ բանող և մթերատու անասունների, թռչունների և գիշեակների համար կազմվում են տեղեկագրեր հետվյալ ձեվով՝  
Յ Ռ Ի Ց Ա Կ

Անասունների հաշվուման համար

Բնակչություն Ամպային մէ	Անասունի տեսակը և անունը	Ցիկ	Ծննդյան տարեթիվը	Քանակը	արժեքն ըստ գրքե- րի	Ծանոթու- թյուն
----------------------------	--------------------------------	-----	---------------------	--------	---------------------------	-------------------

Այս տեղեկագրերի մեջ անասունները գրվում են ըստ տեսակների և հասակային խմբերի, կղունտեսության տարեկան հաշվետվության բլանկին համապատասխան:

Յուրաքանչյուր գույի խոշոր յեղջուրավոր անասունը և ձիերը գրվում են առանձին-առանձին: Խոզերից առանձին-առանձին գրվում են 9 ամսեկանից բարձր հասակ ունեցող վարազներ և մայրեր, 4-ից մինչև 9 ամսեկան մատղաշները, վորոնք գրանցված չեն տոհմային գրքերում և չունեն տոհմային վկայականներ, ինչպես նաև մինչև 4 ամսեկան հասակ ունեցող խոճկորները գրանցվում են խմբերով ըստ ցեղերի:

Վոչխարները և այծերը գրանցվում են վոչ թե առանձին-առանձին, այլ խմբերով ըստ ցեղերի:

Տօնմային գրքերում գրանցված և տոհմային վկայական տնեցող կենդանիները (մեծահասակ և մատղաշ) գրանցվում են առանձին-առանձին:

Երջանային կամ պետական տոհմային գրքում գրանցված յուրաքանչյուր կենդանու նկատմամբ «ծանոթություն» սունյակում պետք ե ցույց տրվի տոհմային գրքում գրանցման Ն-ը, ցույց տալով ում կողմից և յերը և արված տոհմային վկայականը, վորպիսին հիմք և ծառայել գրանցելու տոհմային գրքում:

Ինվենտարիզմայի ժամանակ ամբողջ մատղաշները պարագաներով կերպով պետք ե կշավեն և վերագնահատվեն:

Այս մատղաշները, վորոնք հասել են բարձր հասակի խմբին, սակայն դեռ չեն փոխագրվել պետք և փոխագրվեն համապատասխան խմբում և ցուցակներում ցույց տալ այն խմբի մեջ, վորածեղ նա փոխագրվում ե ըստ հասակի:

Կենդանիների ինվենտարային ցուցակները, գրքի գրանցումների հետ համեմատելու հետեւանքով պետք և սահմանվեն:

կոլանտեսության բալանսի տվյալների առաջիկա տարվա հունվարի 1-ի համար, ըստ խմբերի և արժեքների—

1. Մեծահասակ բանող անհասուն
  2. Մեծահասակ մթերատու անհասուն
  3. Կենդանիների մատղաշներ
  4. Բափող կենդանիներ

### 3. ԱՅԵՐՔՆԵՐ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐ

Մթերքների և նյութերի ստուգումը նպատակ ունի պարզելու նրանց ճիշտ քանակին ըստ տեսակների, սորտի և պահպանության տեղի, նրանց պահպանման կարգն ու վորակը, ինչպես նայել փաստացի մթերքների քանակին ըստ նրանց նպատակային նշանակմանը (մթերքների քանակը, վորը պետք է հանձնվի պետությանը, սերմերի, կերի, քանակը և այլն):

Ստուգումը պետք է կատարել մթերքների և նյութերի պահպանման վայրում, մանրամասն ստուգման և յենթարկվում՝ վաչմիայն հիմնական այլ և յերկրորդական մթերքները (տականքներ, ծզռու և այլն):

Տարեկան հաշվետվություն կազմելու համար, անհրաժեշտ է մթերքների և նյութերի ինվենտարային ցուցակների տվյալները բերել առաջիկա տարվա հունվարի 1-ի դրությանը:

Յեթի պարզվի, վոր նպատակային նշանակություն ունեցող մթերքները ճիշտ չեն ոգտագործվել, կուտնահսության վարչությունը պարտավոր է վերականգնել նպատակային մթերքները և հատկացությունները լրիվ չափով:

Ստուգման ժամանակի ուշագրություն և դարձվում միենք ների և նյութերի վրա կի և նրանց պահպանման պայմանների վրա: Բոլոր գիտադրաթյունները մայցվում են ստուգման ակտի մեջ:

Սթերքների և յոյտի թերի ստուգման ժամանակ, յուրաքանչյուր պահպանման վայրում կազմվում են ցուցակներ հետեւյալ ձեփող

S N H S U L Y

Արերժների յեզ նյութերի հաւաքառման համար

Ա. Ա. Սահ կողման	1/12-38 թ. մինչև ինվենտարիզացիայի որն լստիառապեղիքի կատարված շարժումը	Հայունաբերգության մաս մասնակիլը
Մինչեւ պահանջման հար	Բառակ վերաբերեած դաստիարակության կամ պահանջման մաս մասնակիլը,	1/12-38 թ.

**Ազգային շարունակական բարեկարգություն**

Մասնաբար առ 1/12 ըստ դրեմի	Ավելցուկ	Պակասորդ	Ծանոթություն
Քահանակ Դումարով	Քահանակ Դումարով	Քահանակ Դումարով	Քահանակ Դումարով

Այս ձեվով կազմված ցուցակի, մնացորդի բնդհանուր գումարը, հավասար պետք է լինի մթերքների և նյութերի հաշվառման գրքի մնացորդի գումարին:

Սունյակ «շարժում ընթացիկ տարվա դեկտ. 1-ից ըստ փաստաթղթերի» ցույց և արգում փաստաթղթերի հիման վրա մուտք յեղած և ծախսված մթերքների և նյութերի քանակը գեկտեմբերի 1-ից մինչեւ փաստացի մնացորդի գուրս բերելու որը, դա հնարավորություն կտա դուրս բերելու առ մեկն գեկտեմբերի մնացորդն այն դեպքում, յերբ փաստացի մնացորդը դուրս և բերվում վոչ թե գեկտեմբերի 1-ին, այլ գեկտեմբերի 2-ին կամ 3-ին:

Ո՞ր ի Ն Ա Կ տարեկանի վերաբերյալ փաստացի դուրս բերված մնացորդը կատարված և գեկտեմբերի 3-ին և այդ թվին ըստանում ենք 354 կիլոգրամ՝ մնացորդ, այդ ժամանակաշրջանի մուտքը կազմում է 100 կիլոգրամ, իսկ յելքը 135 կիլոգրամ։ Առ մեկն գեկտեմբերի մնացորդը դուրս և բերվում հետեւյալ ձեվով՝ 354 կիլո+135 կիլո—100 կիլո վորի մնացորդը հավասար կինի 389 կիլոգրամի։

Մնացորդ 389 կիլոգրամը մտցվում և «առ 1-ը գեկտ. ընթացիկ տարվա սահմանված մնացորդ» սունյակում և վորի համար համեմատվում են նույն թվականին մնացորդ լսու դրքերի։

Մթերքների և նյութերի սուուզման ժամանակ մնացորդները պետք և դուրս բերվեն կշռելու և հաշվելու միջոցով (հատերով) մթերքների քանակն աչքի մոտավոր չափավոր վորոշելը չի թույլատրվում։

Մեծածավալ անասնակերի նկատմամբ (խոտ, ծղոտ, սիլոս) թույլատրվում և ծավալի միջոցով վորոշելու նրա կշիռն որինակելի նորմաներով վորպիսին հողրաժնի կողմից սահմանված են արջանի համար։

Յուրաքանչյուր կուլտուրայի և սորտի վերաբերյալ ցուցակներում գրանցումները կատարվում և առանձին-առանձին, սերմֆոնիի համար առանձնացրված սերմացուն հաշվի պետք և առնել առանձին ցուցակում։ Կերի համար առանձնացրված արտադրանքը նույնպես պետք և հաշվի առնել առանձին ցուցակում։

Ինվենտարիզացիա անցկացնող հանձնաժողովը ստուգում և թե ինչ շենքում և պահպատմ սերմացուն, հարմարեցված և արդյոք այդ շենքը սերմացույի պահպանման համար, փչացման չի կարող յինթարկվել հացահատիկը և այլն։

Զկալսկած հացահատիկի կշիռը վորոշելու համար պետք է հիմք վերցնել արգեն կալսկած հացահատիկի նորմայից, այս ձեվով հաշվված մթերքը գնահատվում և պետական մթերման գներով, զրանցվում և տեղեկազրի մեջ և ձեվակերպվում են հատուկ ակտով, փորը հանդիսանում և փաստաթուղթի կոլտնտեսություն մուտք անելու համար։ Կոլտնտեսության ունեցած չվերամշակ-

ված կտվահատ, բույսերը և ցողունները գնահատվում են այն գներով ինչ դներով ընդունվում են կտվահատի և ցողունի վերամշակող գործարանների կողմից: Ինվենտարիզացիայի ժամանակ բոլոր նյութերը պետք է մտցնել մթերքների և նյութերի տեղեկագրի ցուցակում, սեփական արտադրությունից ստացված նյութերն առանձին, իսկ գնվածներն առանձին:

Ստուգման հանրագումարում բոլոր մթերքները և նյութերը պետք են դասվեն հետեւյալ խմբերում՝

### 1. Մ Թ Ե Բ Ք Ն Ե Բ

ա) վորոնք յենթակա յեն բաշխման կուտահականներին ըստ աշխարերի.

բ) յենթակա յեն իրացման

գ) հատուկ նշանակության (ոգնության ֆոնդին, մսուրների և վորերի պահպանման).

### 2. ՍԵՐՄԵՐ ՅԵՎ ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

### 3. ԱՆԱՍՆԱԿԵՐ ՅԵՎ ՑԱՄՔԱՐ

### 4. Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

ա) Շինարարական-վերանորոգման նյութեր

բ) Պահեստի մասեր

գ) Վառվող և քավող նյութեր

դ) Հանքային պարարտանյութեր

### 5. ՄԱՆՐ ԻՆՎԵՆՏԱՐ

### 6. ՈԺԱՆԴԱԿ ԶԵՐՆԱՐԿԱՆԵՐԻՑ ՎՐՁ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԿԱՆ ՇԻՆՎԱԾՔ (ИЗДЕЛИЯ)

### 4. ԱՆԱՎԱՐՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վերաստուգիչ հանձնաժողովն անավարտ արտադրության վերաբերյալ կոլտնտեսության ոպերատորի հաշվետվությունների, ակտերի և այլ փաստաթղթերի հիման վրա պետք են պարզի, վորքան աշխատանք և կատարված հետազա տարվա համարորինակ՝ աշխատացնեն:

Այդ ծախքերի արժեքը, վորը գոյանում և նյութերի (սերմի, պարարտանյութերի և այլն) արժեքից և այդ աշխատանքների վրա կատարված դրամական ծախքերից վերցվում են կոլտնտեսության հաշվապահական գրքերից և ըստ փաստաթղթերի կատարված ծախքերն ստուգելուց հետո, անցենկացվում անավարտ արտադրության ցուցակի մեջ (տեղեկագիր անավարտ արտադրություն ցուցակագրելու համար) այդ ցուցակի մեջ մըսցրվում են և այն մթերքները, վորոնք առաջիկա տարվա հունվարի 1-ին գտնվում են վերամշակման մեջ դրսում:

Տնտեսության համար անավարտ արտադրության ինվենտարի և այլ արտադրական միջոցների ծախսերը սեփական անտեսության համար ցույց են տրվում ցուցակում առանձին:

## 5. ԱՆԱՎԱՐՏ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անավարտ կապիտալ շինարարությունը, վորը վերաբերվում է անավարտ կառուցումներին, սարքավորումներին, նորատունկներին, անավարտ կապիտալ նորոգումներին և այլն, զնահատվում են փաստացի ծախսված դրամանյութային ծախսերի գումարի համաձայն ըստ կոլտնտեսության հաշվապահական գրքերի:

Անավարտ շինարարությունը հաշվի առնելու համար գործադրվում է հետեւյալ ձևիք (այս նույն ձևը ոգտագործվում է նույնպես անավարտ արտադրություն հաշվի առնելու համար):

### Ց Ո Ւ Ց Ա. Կ

Անավարտ շինարարության հաւաքառման համար

Անձ ըստ կարգի	Աշխատանքի կամ անունը	Գաղտնաբառը	Կատարված և ծախսերի առ 1/1-1939 թ.	Կոլտնտեսության մասնակիությունը
Նշույթերի արժեքը	Նշույթերի արժեքը	Գաղտնաբառը	Անդամական տնտեսությունից գրաբար պատճենից վաճառքի արժեքը	Հանդիպությունը

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ— Կառուցումներ,— սարքավորումներ և այլ գույքեր, ավարտված շինարարություն, փորոնք հաշվետու ապրում ակտով հանձնված են շահագործմանը դրվում են գույքագրման ցուցակի տեղեկագրում:

## 6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ

Կոլտնտեսության դրամական միջոցները ստուգվում են հետեւյալ ձեվով— հաշվում են դրամարկղում յեղած կանխիկ դրբամը, ստուգվում են ընթացիկ հաշվիները և կապիտալ ներդրումների հաշիվն ու համեմատվում են կոլտնտեսության գրքով զբամական միջոցների մնացորդը՝ բանկի և խնայողամարկղի այդ հաշվիների մնացորդների հետ:

Վորագես կանխիկ զրամ հաշվվում են դրամը, փոստային մարդաներ, փոխառության ժամկետային կարոններ:

Դրամարկղից ստացականներով բաց թողնված դրամները, փորոնք ձևվակերպված չեն կոլտնտեսության նախագահի կամ նրա տեղակալի ու հաշվետարի կողմից ի նկատի չեն առնվում, նրանց արված դրամները փորպես ծախս չեն հաշվում:

Գրքերով գուրս բերված դրամի պակասորդը հաշվում և փորպես յուրացում և յենթակա յի մարման, իսկ հանցավորները յենթակա յեն դատական պատասխանատվության:

Յեթե դրամարկղի ստուգման ժամեմատած դրամը գրքի հետ ափելցուկ և հայտնաբերվում, այդ մասին կազմվում է առանձին ակտ, իսկ ափելցուկ դրամի համար մուտքի որդեր և գրքում և մուտք և արվում դրամարկղի գրքում, հետո պարզվում է ավելցուկի պատճառը: Հանձնածողովի դիտու-

դությունները դրամարկղի զբքում հայտնաբերված թերությունների մասին մտցվում և դրամական միջոցների սոուզանակում:

Այն գեպքում, յերբ կոլտնտեսության ընթացիկ հաշիվների և կապիտալ ներդրումների հաշվի մնացորդի և ըանկի կամ խնայդրամարկղի տվյալների միջև տարբերություն կա, անհրաժեշտ և անմիջապես պարզել այդ տարբերությունը համեմատելով կոլտնտեսության գրքերի գրանցումները բանկի և խնայդրամարկղների տվյալների հետ:

Կապիտալ ներդրումների հաշիվը սոուզելու ժամանակ առանձնակի ուշադրություն պետք է դարձնել փորպեսզի ճիշտ և իր ժամանակին այդ հաշվում կապիտալ ներդրման գումարները մուծվեն (որինակ՝ յեկամուտներից հատկացում անբաժանելի ֆոնդին, մուտքի վճարները, գույքի վաճառքից ստացված գումարները և այլն) և նրանք իրենց նպատակին ծախսվեն:

## 7. ԱՐԺԵՔԱՎՈՐ ԹՂԹԵՐ

Հանձնաժողովը պարտավոր և սոուզել փաստացի յեղած պետի խասությունների պարտատոմսերը և այլ արժեքավոր թղթեր:

Պարտատոմսերը սոուզվում են խնայդրամարկղին պահ տրված ստացականներով, յեթե նրանք հանձնված են պահպանության, կամ կոլտնտեսության դրամարկղում կանխիկ դրությամբ:

Ստուգման ցուցակում գրվում է փոխառության անունը, համարը, պարտատոմսի կարգը և սերիան, ցույց տալով տոկոսքը պարտատոմսերի կտրոնների ժամկետները և համեմատվում է գրքերի գրանցումների հետ:

Հանձնաժողովը պարտավոր և սոուզել չկան արդյոք պետի խասության պարտատոմսերի մեջ շահած պարտատոմսեր, յեթե այդպիսիները հայտնաբերվեն, առաջարկել գանձապահին ստանալու շահածը և մուտք անել կոլտնտեսության գրքերում:

## 8. ՀԱՇՎԱՌԻ ՆԵՐ

Հանձնաժողովը պարտավոր և սոուզել կոլտնտեսության և զանազան հիմնարկների ու անձանց միջև յեղած հաշվարկը, այսինքն՝ կոլտնտեսության ովքեր և վորքան են պարտք և ուժ ու վորքան և պարտք կոլտնտեսությունը և ինչպիսի միջոցներ են ձեռք առնված կոլտնտվարչության կողմից լուծարքի յենաթարկելու պարտքերը:

Բանկերի, ՄՏԿ-ների և ուրիշ կազմակերպությունների հետ ունեցած հաշվառքի սոուզգումը կատարվում և կոլտնտեսության գրքերի տվյալները այդ հիմնարկների գրքերի տվյալների քաղվածքների հետ համեմատելու միջոցով:

Այդ տվյալներում տարրերություն ստացվելու դեպքում, անհրաժեշտ է պարզել տարրերության պատճառները և վերացնել այն: Առաջիկ անձանց պարտքերը ստուգելու ժամանակ հանձնաժողովը պարտավոր է պահանջել վորապեսի առաջիկ անձինք մարեն իրենց պարտքերը առ 1-ն գեկտեմբերի ընթացիկ տարում, բացառությամբ այն գեպքերի, յերբ հանձնարարության կատարման ժամկետը չի լրացել (որինակ՝ գործուղղություններ):

Հաշվառքների ստուգում կատարելու համար տեղեկագրեր են կազմվում կոլտնտեսության ունեցած պարտքը զանազան հիմնարկներին ու անձերին և զանազան կազմակերպությունների ու անձերի պարտքը կոլտնտեսությանը:

Կազմակերպություններին և անձերին կոլտնտեսության ունեցած պարտքի (կրեղիտորներ) տեղեկագրում ցույց է տրվում կոլտնտեսության պարտքը զանազան կազմակերպություններին ու անձերին հետեւյալ կարգով —

#### 1. Պարտքեր ՄՏԿ-ներին: —

ա) Կոլտնտեսության համար կատարած աշխատանքի համար բնամիջերքով, զրամով:

բ) Տրակտորիստների աշխատանքի վարձատրումը բնամիջերքով, զրամով

2 Պարտքեր բանկին ըստ վարկերի (ցույց տալով յուրաքանչյուր վարկավորումն առանձին):

ա) Կապիտալ ներդրումների համար

բ) Արտադրական կարիքների համար

3. Պարտքեր մթերող կազմակերպություններին

4. Պարտքեր այլ կազմակերպություններին և անձանց

5. Պարտքեր առ հաշիկ անձանց

6. Պարտքեր վարձու մասնագետների աշխատավարձի:

Տեղեկագրերը կազմվում են հետեւյալ ձեվով՝

#### Յ Ո Ւ Յ Ա Կ

Կոլտնտեսության պարտքերի հաշվառման համար (պահանջմանը)

Առաջնական հաշվառման պահանջմանը	Հետապնդության պահանջմանը	Հետապնդության պարտքը	Վարչության համարը	Պարտքի մեջումը	Սարման յերական թեր- մանության պարտի գումարը:	Ծանոթու- թյուն
				Պարտքի մեջումը տար 1-12-1938 թ.	Պարտքի մեջումը տար 1-12-1939 թ.	

Այս ցուցակի մեջ յուրաքանչյուր կազմակերպությունը և անձը պետք է զրվին առանձին-առանձին ըստ կոլտնտեսության ունեցած պարտքերի: Կոլտնտեսության ունեցած պարտքը զանազան հիմնարկություններին և անձանց ստացված գույքի և կապիտալ ներդրման դիմաց ցույց է տրվում ցուցակի մեջ առանձին:

Կոլտնտեսությանը պարտք ունեցող (գերիտորներ) տեղեկագրի ցուցակում ցույց է տրվում կազմակերպությունների և անձերի կոլտնտեսությանը ունեցած պարտքերը։ Յուրաքանչյուր կազմակերպություն և անձ առանձին-առանձին ըստ կոլտնտեսության ունեցած պարտքի պետք և անցկացվեն տեղեկագրում հետովյալ ձեզով՝

### Յ Ո Ւ Յ Ա Կ

Կոլտնտեսության պարտերի հաշվառման համար (պարտերեր)

Կոլտնտեսության հաշվի Ն Ա Հ Ա Տ Ա Վ Ա Ռ Ա Վ Ա Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Ա Ռ Ք Ա Ր Ա Վ Ա Բ	Հ Ա Ռ Ա Վ Ա Ռ Ա Վ Ա Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Պ Ա Ր Ա Վ Ք Ի Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Պ Ա Ր Ա Վ Ք Ի Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Ծ Ա Ն Ա Ռ Ո Ւ Մ Ա Վ Ա Ր Ա Վ Ա Բ	Ծ Ա Ն Ա Ռ Ո Ւ Մ Ա Վ Ա Ր Ա Վ Ա Բ	Ծ Ա Ն Ա Ռ Ո Ւ Մ Ա Վ Ա Ր Ա Վ Ա Բ
Հ Ա Ռ Ա Վ Ա Ռ Ա Վ Ա Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Հ Ա Ռ Ա Վ Ա Ռ Ա Վ Ա Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Հ Ա Ռ Ա Վ Ա Ռ Ա Վ Ա Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Պ Ա Ր Ա Վ Ք Ի Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Պ Ա Ր Ա Վ Ք Ի Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Հ Ա Ռ Ա Վ Ա Ռ Ա Վ Ա Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Հ Ա Ռ Ա Վ Ա Ռ Ա Վ Ա Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ	Հ Ա Ռ Ա Վ Ա Ռ Ա Վ Ա Բ Ն Ե Ր Ա Ր Ա Վ Ա Բ

Կոլտնտեսության ամբողջ պահանջը պետք և դրանցվի տեղեկագրի մեջ հետեւյալ կարգով՝

#### 1. Մ Տ Կ - ա յ ա ն ը

2. Մ թ ե ր ո դ կազմակերպությունները

3. Ա յ լ հիմնարկներ և անձեր

ա) կոլտնտեսության անդամներ այլ հաշվարկներով

բ) վատնութեներ և պակասորդներ

գ) այլ հիմնարկներ և անձեր

4. Ա ռ հ ա շ ի պ ա ն ձ ե ր

5. Վ ա ր ձ ո ւ մ ա ս ո ն ա գ ե տ ն ե ր

Պ ա ր ձ ե ր ը կոլտնտեսության ըստ կասխատ ծախսերի ցույց և տրվում տեղեկագրերի մեջ առանձին։

Կոլտնտեսության պահանջները, փորոնց գանձումը գերիշտորներից մերժված և դատարանի կամ Արքիտրամի կողմից, ցուցակում առանձնացվում են ըստ առանձին խմբի։

Կ ա ր ո դ և պատահել վոր մինենույն հիմնարկությունը մի հաշվով ինքը պարտք լինի կոլտնտեսությանը, իսկ մյուսով նրան պարտք լինի կոլտնտեսությունը, յեթե ըստ պայմանագրի այդ հաշվառքները փոխազարձարար միմիանց չեն ծածկում, այդ գեղքում անհրաժեշտ և այդ հիմնարկությանը տեղափորել յերկու ցուցակներում ցույց տալով պարտքի մնացորդը լրիվ գումարով։ Բնչակես կոլտնտեսության պարտքի ցուցակում նույնպես և կոլտնտեսության պահանջի ցուցակում։

Հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ը պարտավոր և ուշադիր կերպով ստուգել կոլտնտեսությանը բոլոր տեսակի պարտք ունեցող պարտքատերներն, պարզել այդ պահանջները չվճարելու պատճառները պարզել ովքեր են մեղափոր ժամանակին չվճարելու կոլտնտե-

ծ ա ն ս ո թ ու -

թ յ ու ն

սության պարտքերը՝ նըանց պատասխանատվության յենթաբ-  
կելու և ձեռք առնել միջոցներ կոլտնահսությանը ունեցած  
պարտքերը գանձելու:

## 9. ՀԱՇՎԱՐՔ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Կոլտնտեսականների հաշվառքների ստուգումը տարվա  
վերջում, ինվենտարիզացիայի ժամանակ կատարվում և անմի-  
ջականորեն վերստուգիչ հանձնաժողովի միջոցով:

Վերստուգիչ հանձնաժողովը մանրակրկիտ ստուգում և կոլ-  
տնտեսության բոլոր հաշվառքները իր անդամների հետ, հայտ-  
նարերում և աշխարհերի սխալ գրանցումները, սխալ ավանավո-  
րումները, վոչ իր ժամանակին աշխարհերի հաշվառք և այլն դեպ-  
քեր, վորոնք խախտում են արտելի և նրա անդամների շահերը:

Բացի այդ, վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր և ըս-  
տուգել արդյոք ճիշտ են հաշված յուրաքանչյուր կոլտնտեսա-  
կանի տարեկան ընդհանուր աշխարհերը և յուրաքանչյուր կոլ-  
տնտեսականին տրված ավանոները (բնամթերքով ու դրամով):

Կոլտնտեսության հաշվառքները իր անդամների հետ ստու-  
գումից հետո պիտք և պարզի:

### 1. Կոլտնտեսականների պարտքը վերականսավորումից՝

ա) բնամթերքով

բ) դրամով

### 2. Կոլտնտեսության պարտքը կոլտնտեսականներին՝

ա) բնամթերքով ըստ աշխարհերի

բ) դրամով ըստ աշխարհերի

Ստուգման ժամանակ հայտնաբերված բոլոր թերություն-  
ները անհրաժեշտ և նշել արձանագրության մեջ, վորպեսզի այդ  
նյութերի հիման վրա վարչությունը կարողանա վերջնական  
հաշվաք կատարել կոլտնտեսության անդամների հետ իր ժամ-  
կետին, վորը սահմանված և կոլտնտեսության տարեկան հաշվե-  
ավությունը հաստատելու ժամանակ:

## 10. ԻՆՎԵՆՏԱՐԻԶԱՑԻԱՅԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Ինվենտարիզացիոն հանձնաժողովը վերելում ցույց տրված  
ձեվերի համաձայն կազմում և ցուցակներ և անհրաժեշտության  
դեպքում լրացնում և նրանց ակտերով (որինակ ամպետքացած  
գույք, փշացած մթերքներ և այլն դուրս գրելու): Ակտում և  
ցուցակներում նշելում են նրանց կազմելու թվականը և ստուգ-  
մանը մասնակցող անձնավորությունները:

Նյութերի և դրամական արժեքների գույք բերված մեա-  
ցորդների ցուցակը կազմվում և յերկու որինակից, վորից մեկը  
մնում և ստուգվող անձնավորության մոտ (բրիգադիր, պահես-  
տակիտ, գանձապահ և այլն), իսկ մյուսը հանձնվում է կոլտըն-  
տեսության վարչությանը:

Ցուցակները ստորագրվում են ինվենտարիզացիոն հանձնա-  
ժողովի նախագահի, կոլտնտեսության հաշվեարի (հաշվապահի)

սուռուցում անցկացնող հանձնաժողովի անդամների, ինչպես նաև ստուգման աշխատանքներին մասնակցող վերստուգիչ հանձնաժողովի անդամների և այն անձնավորությունների կողմից, վարոնք պատասխանատու յին այդ արժեքների պահպանմանը:

Ինվենտարային ցուցակների տվյալները համեմատվում են կոլտնտեսության գրքերի հետ փարզությունում և ցուցակների կամ գրքերի հետ ստուգման վայրում (բրիգադում, ֆերմայում, պահուստում ուժանդակ ձեռնարկ և այլն):

Տարբերություն տալու գելքում, անհրաժեշտ և ստուգել գրքերի գրանցումները, կրկին անգամ զույգը ստուգել և անպայման պարզել տարբերության պատճառները:

Ցուցակները գրքերի ընթացիկ հաշվառման փաստաթղթերի հետ համեմատելուց և բոլոր տարբերությունները հայտնաբերելուց հետո ինվենտարիզացիոն հանձնաժողովը կազմում և ընդհանուր ակտ կոլտնտեսությունում ինվենտարիզացիա անցիացնելու վերաբերյալ կցում և նրան ինվենտարային ցույցակներ և ակտեր:

Ստուգման ավյալների, գրքերի տվյալների և փաստաթղթերի միջև յեղած տարբերության մասին ակտում կատարում է վիճակություն, նշում և իր առաջարկները յեղած թերությունները կարգավորելու մասին և յեղած նյութերը հանձնում և կոլտնտեսության փարզությանը և վերստուգիչ հանձնաժողովին անհրաժեշտ միջոցներ ձեռնք առնելու համար:

Դուրս բերված բոլոր ինվենտարային նյութերը հիմք են ծառայում կոլտնտեսության տարեկան հաշվեավությունը կազմելու և համաձայն գյուղատնտեսական արտելի կանոնադրության, արտելի անդամների ընդհանուր ժողովում վերստուգիչ հանձնաժողովին գեկուցելու համար, նույնպես և հաջորդ տարվա գրքերը սկսելու համար:

Ինվենտարիզացիայի նյութերը պահպօւմ են կոլտնտեսության վարչության գործերում:

Ինվենտարիզացիոն հանձնաժողովի աշխատանքի մասին, անհրաժեշտ և լայն չափով իրազեկ գարձնել կոլտնտեսական մասսաներին, վարչելով նրանք հաղորդեն այն բոլոր թյուրիմացությունների կամ սխալների մասին, վարոնք կարող են թույլ տրված լինեն տարվա ընթացքում և մինչ այդ որը ուղղված չինեն: Այս գործը պետք է լայն չափով մասսայականացնել, մարդիկացիայի յենթարկել կոլտնտեսություն հասարակությանը, պետք և ստուգումը անպես կտղմանկերպել՝ սականները իրենք ողբեն հանդիսանալու գելու բալոր թերությունները, տանքը հիմք ծառայի ժամանակաշրջանը հաշվեավությունը և կոլտնտեսությանը գործությունը համապատասխան պահպանմանը:



15  
ՀՀ 166